ԼՈՒՐԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մայիսի 6-ին Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Գևորգ և Սուրբ Էջմիածին, Բաթումի Սուրբ Փրկիչ, Ախալքալաքի Սուրբ Խաչ, Ախալցխայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս հայոց եկեղեցիներում կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ մայիսի 3-ին Երևան-Սոչի օդանավի վթարի ժամանակ զոհվածների:

Մինչ սգո արարողությունը, թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն այցելեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն՝ Ցավակցությունների գրքում թողնելով իր վշտակցությունը:

Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում հոգեհանգստյան պաշտոնն անցավ առաջնորդ Սրբազան Հոր հանդիսապետությամբ: Ներկաներն աղոթեցին զոհերի խնկելի հիշատակի և երկնային արքայության մեջ նրանց հոգիների լուսավորության համար: Հավարտ արարողության, Վազգեն Սրբազանը մխիթարական իր ցավակցությունը բերեց զոհվածների ընտանիքներին: Նա երախտագիտությամբ խոսեց այս օրերին վիրահայությանը ցավակցած Վրաց Ուղղափառ Եկեղեցու, Վրաստանի մյուս քույր Եկեղեցիների, Վրաստանի ղեկավարության, Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակի աշխատակիցների մասին: Վազգեն Սրբազանն իր գոհունակությունը հայտնեց նաև Կովկասի մուսուլմանների լիազորված ներկայացուցիչ Ղազի Ախունդ Ալի Ալիևին, ով անձամբ այցելեց առաջնորդարան և իր վշտակցությունը հայտնեց հայ ժողովրդին:

Սգո արարողությանը եկեղեցում էին Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը՝ տիկնոջ հետ, դեսպանատան հյուպատոս Արթուր Սարգսյանը: Այստեղ էին Վրաց խորհրդարանի հայ պատգամավորներ, հայ համայնքի վարչության անդամներ, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքարանին կից Կրոնական խորհրդի կոորդինատոր Լեյլա Ջեջելավան, Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակին կից Հանդուրժողականության կենտրոնի տնօրեն Բեքա Մինդիաշվիլին, Թբիլիսիի մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Սերգո Վարդոսանիձեն և ուրիշներ:

Մայիսի 5-ին Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին այցելեց ՀՀ դեսպանատուն: Սգո մատյանում թողած ցավակցական իր խոսքում երկրի նախագահը գրեց. «Խոր ցավով իմացա Սոչիում տեղի ունեցած ողբերգության մասին: Մեր խոհերն ու աղոթքները հայ ժողովրդի և զոհվածների ընտանիքների հետ են»:

Սգո Գրքում ցավակցական խոսքեր թողեցին և Վրաստանի վարչապետ Զուրաբ Նողաիդելին, պետնախարար Գիորգի Խաինդրավան, Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Մերաբ Անթաձեն, Վրաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանությունների և վրաց մտավորականության ներկայացուցիչները:

Նշենք, որ օդային ողբերգության հետևանքով 113 զոհերի թվում են Վրաստանի մեկ և ծնունդով Ջավախքից վեց քաղաքացիներ: Նրանցից երկուսը Նինոծմինդայի շրջանի Ղուլալիս գյուղից են: Այս առիթով շրջանի ղեկավար Մելս Բդոյանի նախաձեռնությամբ գյուղում տնկվել է 113 ծառ...

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ